

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

15.11.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» (ձև թիվ 6-Ֆ) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան /

Որոշվեց՝

Հաստատել «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» (ծև թիվ 6-Ֆ) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումը:

/Նորմատիվ/

2. «2012 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Հաստատել 2012 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 27-ից 28-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) կողմից կազմակերպված «Հազարամյակի զարգացման 1-ին նպատակը. աղքատության ցուցանիշները և զբաղվածությունը» խորագրով Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

3.2. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 29-ից 30-ը ՄԱԿ-ի Վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն: Հասկացություններ և բնորոշումներ, 2010» (ԱՄԱՎ 2010) նոր ձեռնարկի և «Գլոբալ ֆորումի որոշումների իրականացում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Կ.Շահրազյան/

3.3. Հաղորդում՝ Լեհաստանի Կրակով քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 18-ից 19-ը Լեհաստանի կենտրոնական վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Եվրոպական վիճակագրական համակարգերի զարգացումն Արևելյան գործընկերության շրջանակում. ուղղությունները և ռազմավարությունը » խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ա.Հայրապետյան, Ա.Սաֆյան/

3.4. Հաղորդում՝ Թուրքիայի Անթալիա քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 26-ից 27-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) կողմից կազմակերպված «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կոյունջյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

02.12.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի

պետ Ա.Սաֆյանը, ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան:

Նիսպում լավեցին հետևյալ հարցերը.

1. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հունիսի 25-ի թիվ 53 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

/Զեկուցող՝ Գ. Խաչատրյան/

Որոշվեց՝

Հաստատել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հունիսի 25-ի թիվ 53 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշումը:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագրքոված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքոված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Լիբանանի Բեյրութ քաղաքում 2011 թվականի նոյեմբերի 7-ից 10-ը ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի Կանանց նկատմամբ բռնության վիճակագրության թողարկման ուղեցույցի մշակմանը նվիրված խորհրդատվական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

3.2. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2011 թվականի նոյեմբերի 24-ից 25-ը Եվրամիության հարևանության և համագործակցության քաղաքականության գործիքների շրջանակում «Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգ» /ԷՏՄՀ/ նախագծի ղեկավար կոմիտեի խորհրդակցությանը և ազգային համակարգողների տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

14.12.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի

բաժնի պետ Ն.Մուշեղյանը, ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը:

Նիսարում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշվեց՝

Հաստատել «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից՝ 2006-2010թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազան Համաաշխարհային Բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2006-2010թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով տրամադրել Համաաշխարհային Բանկին Հայաստանի տնտեսական աճի ուսումնասիրություն ծրագրի վերլուծական աշխատանքների իրականացման նպատակով:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 24-ից 28-ը Էներգետիկայի Միջազգային Գործակալության կողմից կազմակերպված «Էներգետիկայի վիճակագրություն» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ.Հակոբյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղուման հաշվետվության մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

/Անհատական/

27.12.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյան ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաբախանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ.Պետրոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ տողի «565726.1» թիվը փոխարինել «570672.0» թվով, 4-րդ տողի «79793.1» թիվը փոխարինել «82667.1» թվով, ընդամենը տողի «743658.3» թիվը փոխարինել «751478.2» թվով:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի հայցորդ Արմենուհի Առուշանյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Երևանի պետական համալսարանի հայցորդ Արմենուհի Առուշանյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Իտալիայի Հոնո քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 5-ից 9-ը Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից կազմակերպված «Մատակարարում-սպառում հաշիվների և պարենային հաշվեկշիռների կազման մեթոդաբանության կատարելագործում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Ա.Ավետիսյան, Տ.Բարսիսանյան/

3.2. Հաղորդում՝ Ուկրաինայի Կին քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 2-ից 16-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «EUROTRACE» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ռ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/